Արամ Այվազյան
ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական, Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,իրավաբանական գիտությունների թեկնածու
էլ. հասցե՝ ayvazyan102@mail.ru
DOI: 10.53614/18294952-2021.2-195

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Սովորելը նման է հոսանքին հակառակ թիավարելուն. Եթե առաջ չգնաս, հետ ես նետվելու»:
Չինական ասացվածք

Հոդվածում ներկայացվել են, ընդհանրապես, իրականացվող ուսուցման կարևորագույն մանկավարժական, հոգեբանական, տրամաբանական մոտեցումները, որոնց իրագործման, ներդաշնակ համատեղման արդյունքում հնարավոր կլինի հասնել առավելագույն արդյունքի: Կատարվել են մեջբերումներ տարբեր ժամանակների մտավորականների մտքերից: Կարևորվել է ուսումնառության բաղկացուցիչ մասը կազմող պրակտիկ հետազոտության դերն ու նշանակությունը: Միաժամանակ ներկայացվել են իրավաբանական կրթության անգլոսաքսոնական և ռոմանագերմանական համակարգերը, տրվել դրանց բնութագրերը, առանձնահատկություններն ու տարբերություններ՝ կատարելով համապատասխան վերլուծություն և առաջարկություն:

Հիմնաբառեր. ուսումնառություն, ուսուցման արդյունավետություն, պրակտիկ հետազոտություն, գիտամանկավարժական աշխատանք, իրավաբանական կրթության անգլոսաքսոնական և ռոմանագերմանական համակարգեր:

Ներածություն

Կրթությունը ուսուցման գործընթացում ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգն է: Գիտելիքը՝ մարդու գաղափարների միասնությունն է, որում արտահայտվում է նրա կողմից առարկաների տեսական յուրացումը: Իսկ ահա կարողությունը գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունն է: Ուսանողի մոտ գիտելիքների յուրացումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ դրանք գիտակցված, լավ յուրացված են, դարձել են նրա գիտակցության մի մասը: Ինչպես նշել է ուկրաինացի մանկավարժ և գրող Վասիլի Սուխոմլինսկին, «սովորելու և ճանաչելու հանդեպ հետաքրքրությունը խորանում է այն ժամանակ, երբ ճշմարտությունները, որոնց տիրապետում է սովորողը, դառնում են նրա անձնական համոզմունքները» (Сухомлинский, 1985, էջ 142):

Մեթոդ

Հետազոտության մեջ տեսական հիմնավորումները տրված են իրավահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդների հիման վրա: Որպես տեսական հիմք ընդունվել են հայ և օտարերկրյա տարբեր մտածողների աշխատությունները, գաղափարները, գերատեսչական տարբեր ակտեր և այլն: Հետևությունները կատարված են՝ հաշվի առնելով իրավապահ մարմինների կողմից իրենց գործունեության ընթացքում հանդիպած և իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրները:

Արդյունքներ

Կրթական բարեփոխումների երկընտրանքներից մեկը «շատ արագ» և «շատ դանդաղ» մոդելների միջև է: Ինչպես նշում է կանադացի գրող, մանկավարժ Մայքլ Ֆուլլանը, երբ բարեփոխումների առաջնորդը «փորձում է արագ շարժվել, գործող մշակույթը ապստամբում է և նման դեպքերում առաջնորդը հեռանում է: Դանդաղ շարժվելու դեպքում գործող մշակույթը կլանում է առաջնորդին և ոչինչ չի փոխվում» (Fullan, Scott, 2009, էջ 152):

Հայ գրող և բանաստեղծ Միքայել Նալբանդյանն ուսուցման մեջ ամենակարևորը համարել է գիտակցությունը՝ նշելով, որ «ուսումնական աշխատանքում հասկանալն ամենակարևորն ու առաջին քայլն է»: Ֆրանսիացի քաղաքական գործիչ, փիլիսոփա և էսսեիզմի հիմնադիր Միշել դը Մոնտենի նման չհասկացած նյութը համեմատում է չմարսված սննդի հետ: Գիտակցության սկզբունքն, ըստ Միքայել Նալբանդյանի, կարևոր է ոչ միայն գի-

տելիքներ յուրացնելու համար, այլև այն ավելի է ակտիվացնում ուսուցման գործընթացը: Որքան հասկացնողը զգում է, որ իր ասածը հասկացվեց, այնքան նա ավելի է ոգևորվում, ավելի լավ է հաղորդում, որից շահում է ուսուցման գործընթացը (Սիմոնյան, 1969, էջ 47):

Հայաստանի Հանրապետությունում «իրավագիտության բակալավր»-ի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատվել է 2004թ. հուլիսի 12-ին, իսկ «իրավագիտության մագիստրոս»-ի պետական կրթական չափորոշիչը՝ 2005թ. նոյեմբերի 30-ին և մինչ օրս չեն վերանայվել: Այնուամենայնիվ, իրավաբանական կրթության որակը կարևորվել է Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրում (Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարականծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ նախագահի կարգադրություն, 2012, էջ 6):

Բարձրագույն իրավաբանական կրթություն ձեռք բերող ուսանողի կողմից ստացած տեսական ուսումնառության և պրակտիկայի հաջող զուգակցման, ուսանողի կողմից ձեռք բերված գիտելիքներն արտադրական պրակտիկայի շրջանակներում զարգացնելու տեսանկյունից, որպես համեմատական վերլուծություն, նշենք, որ, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի որակի ապահովման գործակալության չափանիշներում ևս կարևորվում են հիմնախնդիրները լուծելու, վերլուծելու և սինթեզելու, տարբեր աղբյուրներներից տեղեկատվություն ստանալու և կիրառելու, հաղորդակցվելու կարողությունները, ինքնուրույնությունը, գրագիտությունը (Law. The Quality Assurance Agency for Higher Education, 2007, էջ 14):

Քննարկում

Ժամանակակից աշխարհում կրթությունը բախվում է լուրջ հիմնախնդիրների: Թեև մարդկությունը զգալի առաջընթաց է ապրել, սակայն կրթության կազմակերպման բազմաթիվ խնդիրների լուծումներ դեռևս գտնված չեն, քանի որ սրընթաց զարգացող և հարափոփոխ ժամանակակից աշխարհը նոր մարտահրավերներ է նետում մարդկությանը:

Կրթության զարգացումն ընթանում է անընդհատ բարեփոխումների, որոնումների միջավայրում, ուստի կրթության ոլորտում փոփոխություններն այսօր անխուսափելի են: Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ փոփոխությունները ոչ թե ժամանակավոր են, այլ հարափոփոխ, ինչը նշանակում է, որ պետք է սովորենք ապրել մշտական փոփոխությունների ժամանակաշրջանում: Բայց, մասնագետների կարծիքով, կրթության ոլորտում իրականացվող փոփոխությունները դեռևս ցանկալի արդյունք չեն տալիս: Մասնավորապես, կրթական բարեփոխումների մասնագետ Էնդի Հարգրիվսը նշում է. «Թեև այսօր մենք ավելի լավ ենք հասկանում, թե ինչ են նշանակում փոփոխությունները կրթության ոլորտում, բայց փոփոխություններին միտված շատ ջանքեր դեռևս հիասթափեցնող և անարդյունավետ են»

(Hargreavess, 1998):

Ուսումնական նյութի ամրության մակարդակը պայմանավորված է ուսումնական նյութի և ուսումնական գործընթացի նկատմամբ ուսանողի վերաբերմունքով: Այն կախված է ուսուցման մեթոդներից, միջոցներից և ժամանակից: Ընդ որում, դասախոսի անձը նույնպես նպաստում է հիշողությանը: Ուսանողական տարիները մարդու զարգացման լավագույն շրջանն է: Երիտասարդ մարդը ԲՈՒՀ-ն ավարտելու հետ միասին հիմնականում հասնում է ֆիզիկական, մտավոր, սոցիալական ու բարոյական հասունության:

Գիտամանկավարժական աշխատանքի տեխնիկան սահմանվում է իբրև «այն գիտելիքների, կարողությունների և հմտությունների համալիր, որն անհրաժեշտ է դասախոսին գործնականում արդյունավետ կիրառելու համար»: Սակայն, միևնույն ժամանակ, գիտամանկավարժական աշխատանքի տեխնիկան արդյունավետ է միայն այն դեպքում, երբ դասախոսը ստեղծագործաբար է մոտենում իր ուսանողների ուսուցման գործին: Ավելին, ուսման գործունեության արդյունավետությունը կախված է նրա նկատմամբ ուսանողների վերաբերմունքից: Մենք գիտենք, թե ինչքան ավելի հեշտ է ու հաճելի ուսուցանել այն ուսանողին, որը տրամադրված է սովորել, քան նրան, ով սովորում է հարկադրաբար, չկամությամբ, ուստի հենց այս նկատառումից էլ բխում է դասավանդողի կողմից ցուցաբերված ստեղծագործ աշխատանքի անհրաժեշտությունը:

Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև գործող կրթական ծրագրերի կատարելագործման համար կարևոր նշանակություն ունի «ուսումնառության արդյունքներ» եզրույթը: Արևմտյան Եվրոպայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Հարավային Աֆրիկայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների պրատիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ուսումնառության արդյունքներ» եզրույթի վերաբերյալ իմաստային առումով սկզբունքային տարբերություններ չկան: «Ուսումնառության արդյունքներ» հասկացության ընդհանրական մոտեցումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ «ապացույցներ այն մասին, թե ինչ գիտի, ինչ է հասկանում և ինչ է ընդունակ անել ուսանողն ուսումնառության գործընթացն ավարտելիս» (A Tuning Guide to Formulating Degree Programme Profiles Including Programme Competences and Programme Learning Outcomes, 2010, էջ 55: United Kingdom Bologna Seminar 1-2 July 2004 Scotland, էջ 5: Skills, Not Just Diplomas, 2012, էջ 49: Stephen, 2004, էջ 5): Սովորաբար դրանք սահմանվում են գիտելիքի, հմտությունների և կարողությունների տեսքով (Մորախովսկի, 2010, էջ 5: Առաջարկություններ և գործողությունների ծրագիր Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում կրեդիտային համակարգի ներդրման վերաբերյալ, 2010, էջ 5):

Վերը հիշատակված գաղափարների և մոտեցումների լույսի ներքո, անդրադառնալով բարձրագույն իրավաբանական կրթության արդյունավետ ապահովմանը, հարկ է նկատել, որ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում իրականացվող վերափոխումները պահանջում են նաև նոր մոտեցումներ իրավունքի, իրավական պետության և քաղաքացիական հա-

սարակության զարգացման, իրավական մշակույթի բարձրացման, հետևաբար նաև հասարակությունում իրավաբանի տեղի և դերի վերագնահատման վերաբերյալ: Իրավաբանի մասնագիտությունն ունի մեծ սոցիալական դեր: Իրավաբանները պաշտպանում են անձի շահերը, նրա իրավունքները, ազատությունը, սեփականությունը, հասարակության և պետության շահերը հանցավոր և այլ հակաիրավական ոտնձգություններից:

Իրավաբանական կրթությունը թույլ է տալիս աշխատել տարբեր ոլորտներում, ընդսմին՝ պետական և մասնավոր հատվածներում: Բարձրագույն իրավաբանական կրթությունը որպես մասնագիտական գործունեություն իրականացնելու պարտադիր պայման նշված է մի շարք նորմատիվ-իրավական ակտերում, օրինակ՝ Դատական օրենսգրքում, «Դատախազության մասին», «Փաստաբանության մասին», «Նոտարիատի մասին» և այլ օրենքներում: Բացի այդ, տարբեր ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում աշխատում են իրավաբաններ, իրավախորհրդատուներ, որոնք, համաձայն պաշտոնի անձնագրի կամ աշխատանքի նկարագրի, պետք է ունենան մասնագիտական իրավաբանական կրթություն[1]:

Այսօրվա աշխատաշուկան համապատասխան մասնագետներից պահանջում է ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև կարողություններ և հմտություններ, ինչպիսիք են օրինակ՝ գիտելիքները գործնականում կիրառելը, իրավական խնդիրների լուծումը, համակարգային և քննադատական մտածողությունը, բարոյականությունը, պատասխանատվությունը, թիմային աշխատանքը, հաղորդակցումը, օտար լեզուների իմացությունը և այլն: Թերևս պետք է արձանագրել, որ սրանք այն հմտություններն ու կարողություններն են, որոնք առավելապես ձեռք են բերվում ուսումնառության ծրագրի բաղկացուցիչ հատվածը կազմող պրակտիկայի շնորհիվ: Այս առիթով նշենք, որ ուսուցման արդյունավետությունը ստուգվում է պրակտիկայով: Ուսուցման և պրակտիկայի կապը ապահովվում է ուսանողների աշխատանքային, արտադրական աշխատանքների շնորհիվ:

Գոյություն ունեն որոշակի կանոններ, որոնց ստեղծագործական կիրառումը կնպաստի ուսանողի կողմից ձեռք բերված գիտելիքների արդյունավետ յուրացմանը, մասնավորապես՝

- պրակտիկայով ապացուցել ուսանողներին տեսական գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը,
- ցույց տալ, որ գիտությունը զարգանում է պահանջարկի ազդեցության ներքո,
- տեղեկացնել ուսանողներին գիտական նորությունների մասին,
- սովորեցնել սովորածը կիրառել գործնականում,
- հաստատել կապեր սովորածի և ապագա մասնագիտության միջև և այլն:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցությունն առանձնացնում է հիմնախնդիրներ լուծելու, իրավական գնահատական տալու, իրավաբանական

1 Օրինակ՝ Համայնքային ծառայության պաշտոնի անձնագիր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական ապահովության բաժնի պետի:

գրականության, փաստաթղթերի և փաստերի վերլուծության, հաղորդակցման, խորհրդատվություն տրամադրելու, բանակցություններ վարելու կարողությունները, դատական վեճերի հետ կապված ընթացակարգերի, վեճերի լուծման այլընտրանքային միջոցների իմացությունը, իրավաբանական աշխատանքների կազմակերպումը և կառավարումը, բարոյական բնույթի խնդիրների բացահայտումը և լուծումը ("Legal Education and Professional Development: An Educational Continuum (Legal Education and Professional Development, 1992, էջեր 141–221): Այս համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այստեղ նեղ մասնագիտացումը զուգորդվում է ուսումնառության գործընթացի գործնական ուժեղ ուղղվածությամբ՝ կոնկրետ գործերի վերլուծություն (նախադեպերի վերլուծություն), ուսումնական դատավարություններ (դատախաղեր), աշխատանք փաստաթղթերի հետ (կազմում և այլն): Ամերիկյան իրավաբանական կրթությունն ունի որոշակի գիտամասնագիտական և գործնական նշանակություն: Հայաստանը (ինչպես և եվրոպական պետությունների մեծամասնությունը) պատկանում է ռոմանագերմանական իրավական համակարգին, որը հիմնվում է օրենքների (օրենսգրքերի) վրա: Այս համակարգում դատավորի դերը օրենսդրության մեկնաբանման մեջ է:

ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում գործում է ընդհանուր իրավունքի անգլոսաքսոնական համակարգը, որի հիմքում ընկած է դատական նախադեպը: Այստեղ դատավորը գործի քննության ժամանակ հիմնվում է բարձր դատարանների կողմից նախկինում նմանատիպ գործերով կայացրած որոշումների փորձի վրա: Իրավաբանական կրթության անգլոսաքսոնական համակարգը ուսանողին տրամադրում է ընդհանուր գիտելիքներ իրավունքի վերաբերյալ՝ զարգացնելով տրամաբանորեն մտածելու կարողությունը: Ուսանողին պարտադիր չէ հասկանալ իրավաբանական բոլոր նրբությունները, առավել կարևոր է ունակ լինել վերլուծելու ցանկացած իրավիճակ և հասկանալ օրենքի կիրառումը կոնկրետ դեպքում[2]: Եթե մեր կրթական համակարգում դասախոսություններն ու դասագրքերն իրենց բովանդակությամբ հիմնականում սահմանափակվում են օրենքների զուտ ֆորմալ նկարագրումով, գործող օրենսդրության ոչ քննադատական շարադրանքով կամ գործող դատական պրակտիկան ուղղակի փաստելով, ապա ամերիկյան համակարգում թե՛ ուսուցումը, թե՛ դասագրքերի կազմումը զուգորդվում է գործող օրենսդրության, դատական նախադեպերի շարադրմամբ և դրանց առանձին դրույթների քննադատական, ստեղծագործական վերլուծությամբ, դասախոսությունների նյութերը շարադրվում են զուտ վերլուծությունների ձևով, ինչն էլ իր հերթին նպաստում է համապատասխան կոմպետենցիաների ձևավորմանը (Ջոմարդյան, 2014, էջ 336): Հավելենք նաև, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախա-

2 Ի տարբերություն անգլոսաքսոնական իրավական համակարգում գործող կրթական համակարգի, ֆրանսիական իրավաբանական կրթությունը երկար ժամանակ մեծ տեղ է հատկացրել տեսական իմացությանը չհաղորդակցվելով պրակտիկայի հետ. «Իրավաբանական կրթության նպատակն է ուսանողին պալ տեսության օդով շնչելու հնարավորություն՝ չիջնելով պրակտիկայի մակարդակի» (Осакве, 2008, էջ 225):

բարության կողմից 2021թ.-ի սեպտեմբեր ամսին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանում շրջանառության մեջ է դրվել «Իրավագիտություն» որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերի աշխատանքային տարբերակը՝ կարծիքներ և հնարավոր նկատառումներ, առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Ընդ որում, ուսումնասիրելով այն, գտնում ենք, որ ներկայացված տարբերակում, հիրավի, արձանագրված են ակնկալվող այն չափորոշիչները և վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ և բավարար գործոններ են հանդիսանում բակալավրի և մագիստրատուրայի կրթական մակարդակներում որակյալ մասնագետներ պատրաստելու համար:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերոշարադրյալ իրավական համակարգերի առանձնահատկությունները և տարբերությունները, կարծում ենք, որ ուսանողի կողմից լիարժեք իրավաբնկալման, ուսումնառությունն ավարտելուց հետո իրավակիրառ հարթության շրջանակներում մասնագիտական ինքնուրույնություն ցուցաբերելու տեսանկյունից առավել արդարացված և գործնականորեն շոշափելի արդյունք կարող է ապահովել առավելապես ընդհանուր իրավունքի անգլոսաքսոնական համակարգը, ինչը և մեր կողմից առաջարկվում է գնահատել՝ թեկուզ և քննարկման տիրույթում:

Օգտագործված գրականության ցանկ

Սիմոնյան, Շ. (1969) *Միքայել Նալբանդյանի հոգեբանական հայացքները*: Երևան:

Մորախովսկի, Դ. (2010) *ՄԱՋԾ ՄԿՈՒ ծրագիր:* Առաջարկություններ և գործողությունների ծրագիր Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում կրեդիտային համակարգի ներդրման վերաբերյալ: Սեպտեմբեր, 2010:

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ նախագահի կարգադրություն, ընդունվել է 2012 թվականի հունիսի 30-ին:

Ջոմարդյան, Ն. (2014) Իրավագիտություն մասնագիտության կրթական ծրագրի կոմպետենցիաների ձևավորման գործընթացի հայեցակարգային դրույթները/ *Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները:* Գիտաժողովի նյութերի ժողովածու/ խմբ. խորհուրդ. - Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, գիրք 4, էջեր 336-362 :

Осакве К. (2008). *Сравнительное правоведение: схематический комментарий.* М., Юрист.

Сухомлинский, В.А. (1985). Сердце отдаю детям / *Избранные произведения.* Том 3. Издательство “Радяньска школа”.

Law, (2007). *The Quality Assurance Agency for Higher Education* http://www.qaa.ac.uk/

en/Publications/Documents/Subject-benchmark-statement-law.pdf (մուտք՝ 23.09.2021)

Legal Education and Professional Development: An Educational Continuum ("MacCrate Report"), (1992), published by the American Bar Association. http://www.americanbar.org/aba.html. (մուտք՝ 12.09.2021)

Hargreaves, A. (1998). *Pushing the boundaries of educational change, in International Handbook of Educational Change,* ed. Hargreavess. Springer Science & Business Media,May 31, 1998.

Fullan, M., Scott, G. (2009). *Turnaround Leadership for a ligher Education.* U.S.: Jossey-Bass.

A Tuning Guide to Formulating Degree Programme Profiles Including Programme Competences and Programme Learning Outcomes, (2010). Editors: Jenneke Lokhoff and Bas Wegewijs (Nuffi c), Katja Durkin (UK NARIC), Robert Wagenaar, Julia González, Ann Katherine Isaacs, Luigi F. Donà dalle Rose and Mary Gobbi (TUNING):, Bilbao, Groningen and The Hague.

United Kingdom Bologna Seminar 1-2 July 2004. Heriot-Watt University (Edinburgh Conference Centre) Edinburgh. Scotland.

Stephen, Adam (2004). *Using learning outcomes.* A consideration of the nature, role, application and implications for European education of employing 'learning outcomes' at the local, national and international levels., University of Westminster, June 2004.

Skills, Not Just Diplomas. (2012) *Managing Education for Results in Eastern Europe and Central Asia.* Lars Sondergaard and Mamta Murthi with Dina Abu-Ghaida, Christian Bodewig, and Jan Rutkowski. The World Bank, Washington, D.C.

Tuning Methodology. http://www.unideusto.org/tuningeu/tuning-methodology.html (մուտք՝ 03.09.2021)

References

Simonyan, Sh. (1969) *Mikayel Nalbandyani hogebanakan hayatsknery* [Mikael Nalbandyan's psychological views]. Yerevan. (In Arm.)

Morakhovski, D. (2010) *MAZTS MKU tsragir* [UNDP VET Program]. Arrajarkutyunner yev gortsoghutyunneri tsragir Hayastani masnagitakan krtutyan yev usuts'man volortum kreditayin hamakargi nerdrman veraberyal September, 2010. (In Arm.)

Hayastani Hanrapetutyan iravakan yev datakan barepvokhumneri 2012-2016 tvakanneri rrazmavarakan tsragiry yev tsragrits bkhogh mijotsarrumneri tsanky hastatelu masin HH nakhagahi kargadrutyun [The order of the President of the Republic of Armenia on approving the list of measures arising from the legal-judicial strategic reform program of the Republic of Armenia for 2012-2016,], yndunvel e 2012 tvakani hunisi 30-in. (In Arm.)

Jomardyan, N. (2014) *Iravagitutyun masnagitutyan krtakan tsragri kompetentsianeri dzevavorman gortsyntatsi hayetsakargayin druytnery* [Conceptual Provisions on Law Degree Program Development Competences]/Hayastani Hanrapetutyan sotsial-tntesakan zargatsman himnakhndirnery yev arrajnahertutyunnery. Gitazhoghovi nyuteri zhoghovatsu/khmb. khorhurd. - Yer.: Yevrasia mijazgayin hamalsaran, girk

4, ejer 336–362. (In Arm.)

Osakve K. (2008). *Sravnitelnoye pravovedeniye: skhematicheskiy kommentariy* [Comparative jurisprudence: a schematic commentary]. M., Yurist. (In Rus.)

Law, (2007). *The Quality Assurance Agency for Higher Education* http://www.qaa.ac.uk/en/Publications/Documents/Subject-benchmark-statement-law.pdf (accessed 23.09.2021) (In Eng.)

Legal Education and Professional Development: An Educational Continuum ("MacCrate Report"), (1992), published by the American Bar Association. http://www.americanbar.org/aba.html. (accessed 12.09.2021)

Hargreaves, A. (1998). *Pushing the boundaries of educational change, in International Handbook of Educational Change,* ed. Hargreavess. Springer Science & Business Media,May 31, 1998. (In Eng.)

Fullan, M., Scott, G. (2009). *Turnaround Leadership for a ligher Education.* U.S.: Jossey-Bass. (In Eng.)

A Tuning Guide to Formulating Degree Programme Profiles Including Programme Competences and Programme Learning Outcomes, (2010). Editors: Jenneke Lokhoff and Bas Wegewijs (Nuffi c), Katja Durkin (UK NARIC), Robert Wagenaar, Julia González, Ann Katherine Isaacs, Luigi F. Donà dalle Rose and Mary Gobbi (TUNING):, Bilbao, Groningen and The Hague. (In Eng.)

United Kingdom Bologna Seminar 1-2 July, 2004. Heriot-Watt University (Edinburgh Conference Centre) Edinburgh. Scotland. (In Eng.)

Stephen, Adam (2004). *Using learning outcomes.* A consideration of the nature, role, application and implications for European education of employing 'learning outcomes' at the local, national and international levels., University of Westminster, June 2004. (In Eng.)

Skills, Not Just Diplomas. (2012) *Managing Education for Results in Eastern Europe and Central Asia.* Lars Sondergaard and Mamta Murthi with Dina Abu-Ghaida, Christian Bodewig, and Jan Rutkowski. The World Bank, Washington, D.C. (In Eng.)

Tuning Methodology. http://www.unideusto.org/tuningeu/tuning-methodology.html (accessed 03.09.2021) (In Eng.)

Арам Айвазян
Начальник второго следственного отдела административных районов Кентрона и Норка-Мараша Следственного комитета РА, советник юстиции второго класса, преподаватель кафедры юриспруденции Международного университета Евразия, кандидат юридических наук
Эл. адрес: ayvazyan102@mail.ru

ОСОБЕННОСТИ СОВМЕЩЕНИЯ ТЕОРЕТИЧЕСКОГО И ПРАКТИЧЕСКОГО АСПЕКТОВ ВЫСШЕГО ЮРИДИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ ЭФФЕКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ

В статье представлены важнейшие педагогические, психологические, логические подходы к обучению в целом, реализация которых в результате гармоничного сочетания позволит достичь максимальных результатов. Цитируются высказывания мыслителей разных времен. Подчеркнута роль и значение практических исследований, которые являются неотъемлемой частью обучения. При этом автором представлены англо-саксонские и романо-германские системы юридического образования, даны их характеристики, особенности и различия, сделан соответствующий анализ, представлено предположение.

Ключевые слова: учеба, практические исследования, англо-саксонские и романо-германские системы научно-педагогического, юридического образования.

Aram Ayvazyan
Head of the Second Investigative Division of Kentron and Norq-Marash Administrative Districts of Yerevan of Investigative Committee of RA, 2nd Class Adviser of Justice, Lecturer of the Law at the Eurasia International University, Ph.D. in Law
Email: ayvazyan102@mail.ru

FEATURES OF COMBINING THEORETICAL AND PRACTICAL ASPECTS OF HIGHER LEGAL EDUCATION IN THE CONTEXT OF LEARNING EFFECTIVENESS

The most important pedagogical, psychological and logical approaches to learning, in general, have been presented in the article, the realization and harmonious combination of which may allow the achievement of maximum results. Quotations from the thoughts of thinkers of different periods have been made. The role and significance of practical research, which is an integral part of learning, have been emphasized. At the same time, the Anglo-Saxon and the Romance-

Germanic systems of legal education, their characteristics, features and differences have been presented making a corresponding analysis and presenting a suggestion.

Key words: learning, practical research, Anglo–Saxon and Romance–Germanic systems of scientific–pedagogical, legal education.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2021թ. հոկտեմբերի 22–ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2021թ. հոկտեմբերի 23–ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2021թ. նոյեմբերի 1–ին: